ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1951 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ «ՏԵՂԵԿԱԳՐԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԻՍՏԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱԶԻՍԻ ԵՎ ՎԵՐՆԱՇԵՆՔԻ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

1951 թ. հոկտեմբերի 22—29-ին կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության սեկտորի գիտական խորհրդի և հասարակական գիտությունների «Տեղեկագրի» խմբագրության համատեղ ընդլայնած նիստը, նվիրված փիլիսոփայական գիտությունների գոկտոր ընկ. Վ. Կ. Զալոյանի՝ «Բազիսի և վերնաշենքի մասին՝ ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսով» հոդվածի քննարկմանը։ Նիստին մասնակցեցին Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ, թղթակից անդամներ, գիտության դոկտորներ, թեկնածուներ և մայրաքաղաքի ինտելիգենցիայի և ուսանողության բազմաթիվ ներկայացուցիչներ։

Ժողովը բաց արեց Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Փիլիսոփայության սեկտորի վարիչի պաշտոնակատար ընկ. Վ. Ղազանչյանը։ Նշելով, որ ընկեր Ստալինի՝ լեզվաբանության հարցերին նվիրված աշխատությունները նոր էպոխա են կազմում լեզվի մարքսիստական ուսմունքի մեջ և հսկայական ազդակ են հանդիսանում հասարակական գիտությունների և մասնավորապես փիլիսոփայության հետագա զարգացման համար, ընկ. Ղազանչյանը կոչ արեց ժողովի մասնակիցներին՝ ակտիվորեն հանդես գալ քննարկվող հարցի շուրջը և օգնել՝ լուսաբանելու այն խնդիրները, որոնք դիսկուսիոն կարգով առաջ են քաշված ընկ. Զալոյանի հոդվածում։

Ընկ. Վ. Ղազանչյանի բացման խոսքից հետո ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին 16 ընկերներ։

Պրոֆեսոր Զ. Բաշինջաղյանը իր ելույթում հանգամանորեն կանգ առավ ընկ. Զալոյանի հոդվածում տեղ գտած մի շարք վիճելի խնդիրների վրա։

Վերնաշենքը,— ասաց նա,— իր ամբողջությամբ ստեղծվում է տվյալ բազիսի կողմից։ Անցնելով իշխանության գլուխ, բուրժուազիան ստեղծում է իրեն անհրաժեշտ վերնաշենքը— բուրժուական պետական ապարատը, զանազան հիմնարկություններ և կազմակերպություններ, որոնց նպատակն է ամրապնդել կապիտալիստական բազիսը, այսինքն բուրժուական հասարակության տնտեսակարգը։ Այդ հիմնարկությունները ու կազմակերպությունները ստեղծվում էին բուրժուազիայի կողմից, համաձայն նրա այն տեսակետների ու իդեաների, ըստ որոնց կապիտալիստական հասարակակարգը բնական է ու հավերժական։ Այդ տեսակետները ու իդեաները արտահայտում և պաշտպանում են իշխող դասակարգի շահերը։ Այդ պատճառով նրանք դառնում են տվյալ հասարակակարգի իշխող իդեաները։ Կապիտալիստական հասարակակարգը ամրապնդելու նպատակով ստեղծված կապիտալիստական վերնաշենքն իր սուր ծայրով ուղղված է պրոլետարիատի դեմ։ Բուրժուական պետությունը, եկեղեցին, բուրժուական քաղաքական պարտիաները, մամուլը և այլն կոչված են առաջին հերթին ճնշելու, ենթարկված վիճակում պահելու կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը և աշխատավոր մասսաները։ Բուրժուական հասարակակարգում նույնպիսի նպատակ ունեն նաև գիտությունը, գրականությունը և արվեստը, որոնք կազմում են վերնաշենքի էլեմենտները։ Այդ պատճառով շահագործվող դասակարգերը պայքարում են ո՛չ միայն կապիտալիստական բազիսի, այլև այդ բազիսի ստեղծած վերնաշենքի դեմ, որը ակտիվորեն օժանդակում է իր բազիսի ձևավորմանն ու ամրապնդմանը, այսինքն՝ աշխատավորների շահագործմանը։

Պայքարելով իշխող դասակարգի քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական և փիլիսոփայական հայացքների դեմ, պրոլետարիատը, որ հանդիսանում է նոր, սոցիալիստական արտադրաեղանակի կրողը, մշակում է իր սեփական իդեոլոգիան, որն արմատապես տարբերվում է իշխող բուրժուական դասակարգի իդեոլոգիայից՝ հասարակության իդեական-քաղաքական և հոգևոր կյանքի բոլոր հարցերում։ Շահագործող դասակարգի հասարակական գիտակցության բոլոր ձևերին պրոլետարիատը հակադրում է իր տեսակետները, որոնք բացատրում և ժխտում են շահագործողական կարգերի և՛ բազիսը, և՛ վերնաշենքը։

Կապիտալիստական հասարակակարգի վերնաշենքը կոչված է ծառայելու իր բազիսին,

բայց լինելով անտագոնիստական բազիսի ծնունդ, կրելով դասակարգային-սահմանափակ բնույթ և ակտիվորեն օգնելով շահագործող դասակարգերին, նա միաժամանակ անխուսափելիորեն իր մեջ առաջացնում է այնպիսի երևույթներ, որոնք բայքայում են այդ բազիսը։ Այդ պատճառով բուրժուական հասարակակարգի գիտությունը ևս, լինելով վերնաշենքի կարևորագույն էլեմենտներից մեկը և կրելով դասակարգային բնույթ, ծառայում է կապիտալիստների դասակարգին։

Որոշ ընկերներ այն կարծիքի են, թե հասարակական գիտությունները պետք է համարել վերնաշենքային կատեգորիա, իսկ մաթեմատիկան, մեխանիկան, ֆիզիկան, աստղաբաշխությունը, տեխնիկական գիտությունները չի կարելի համարել վերնաշենքային կատեգորիաներ։ Այս տարօրինակ կարծիքի կողմնակիցները ենթադրում են, որ բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը կատարվում է իբր թե բազիսից անկախ և կապ չունի վերնաշենքի հետ։ Այդ ընկերներն օրինակ են բերում էլեկտրականության, էլեմենտների պարբերական սիստեմի, ատոմային էներգիայի հայտնագործումը՝ իբրև «ապացույց» այն բանի, որ այսպես կոչված ճշգրիտ գիտությունները վերնաշենքային չեն, որ այդ հայտնագործությունները իբր թե միատեսակ ծառայում են բոլոր դասակարգերին։ Մինչդեռ գիտության պատմությունը, այդ թվում տեխնիկական գիտությունների պատմությունը, ամեն օր նոր փաստերով ապացուցում է այն ճշմարտությունը, թե դասակարգային հասարակության մեջ գիտությունը զարգանում է իշխող դասակարգի շահերին համապատասխան։

Չգալով, որ բոլորովին անհիմն է իրենց պնդումն այն մասին, թե գիտությունը զարգանում է բազիսից անկախ, որ այդ պնդումը հակասում է պատմական մատերիալիզմի սկզբունքներին, այս տեսակետի կողմնակիցները փորձում են ելք գտնել՝ կոմպրոմիսների միջոցով։ Ընկ. Չալոյանը այդ նպատակով առաջին հերթին խստորեն զանազանում է վերնաշենքը և հասարակական գիտակցության ձևերը, գտնելով, որ այդ երկու հասկացությունները նույնական չեն (տե՛ս նրա հոդվածը, «Տեղեկագիր», 1951 թ., № 7, էջ 93)։ Իհարկե, այս երկու հասկացությունները նույնական չեն, որովհետև վերնաշենքի մեջ, բացի «հասարակական գիտակցության ձևերից», մտնում են նրանց համապատասխան քաղաքական, իրավական և այլ հաստատությունները։ Բայց մատնանշելով, որ այդ երկու հասկացությունները նույնական չեն, ընկ. Չալոյանը տարօրինակ եզրակացություն է հանում այն մասին, որ վերնաշենքի գաղափարն ավելի նեղ է ու սահմանափակ, քան հասարակական գիտակցության ձևերի գաղափարը, որ այդ վերջինը ավելի մեծ է ու լայն, քան վերնաշենքը, քան հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական և փիլիսոփայական հայացքները։

Ընկ. Չալոյանը վերնաշենք ասելով հասկանում է միայն քաղաքական, իրավական, կրոնական, փիլիսոփայական, գեղարվեստական հայացքները, անհոգ կերպով դեն նետելով այդ հայացքներին համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հաստատությունները։ Նա բոլորովին ինքնակամ կերպով միմյանցից անջատում է քաղաքական հայացքները և քաղաքականությունը, իրավական հայացքները և իրավունքը, կրոնական հայացքները և կրոնը, փիլիսոփայական հայացքները և գիտությունը, գեղարվեստական հայացքները և գրականությունն ու արվեստը։ Այս արհեստական մասնատումը նրան անհրաժեշտ է եղել այն բանի համար, որպեսզի հիմք ունենա պնդելու, թե կրոնը, գիտությունը, գրականությունը, արվեստը վերնաշենքային կատեգորիաներ չեն։ Ամփոփելով իր ասածները, նա գրում է. «Այսպիսով գիտության մեջ միայն փիլիսոփայությունն է, ավելի ճիշտ՝ փիլիսոփայական հայացքներն են— մեթոդոլոգիան և աշխարհայեցողական սկզբունքները, որ հանդիսանում են վերնաշենք» (էջ 97)։

Ընկ. Չալոյանը ենթադրում է, որ տեխնիկական գիտությունների մեջ վերնաշենքային ոչինչ չկա։ «Տեխնիկան,— գրում է նա,— անտարբեր է վերաբերվում դասակարգերին և միատեսակ կարող է պիտանի լինել տարբեր դասակարգերի՝ հասարակության զարգացման տարբեր էտապներում» (էջ 97)։

Տեխնիկական գիտությունների, ինչպես և առհասարակ բոլոր գիտությունների զարգացումը կապիտալիստական հասարակակարգում ենթակա է բուրժուազիայի շահերին։ Ներկայումս կապիտալիստական երկրներում հսկայական միջոցներ են ծախսվում ատոմական էներգիայի ուսումնասիրման ուղղությամբ, որի նպատակն է՝ ենթարկել ողջ աշխարհը մոնոպոլիստական կապիտալի իշխանությանը։ Մի՞թե պարզ չէ, որ հենց այդ ագրեսիվ նպատակների շնորհիվ է կատարվում ատոմական ֆիզիկայի զարգացումը կապիտալիստական երկրներում։ «Պրավդայի» թղթակցի հետ ունեցած վերջին զրույցում ընկեր Ստալինի խոսքերը մի անգամ ևս ապացուցում են այն սերտ կապը, որ գոյություն ունի տեխնիկական գիտությունների զարգաց-

ման և հասարակության կառուցվածքի միջև։

Զարգացնելով իր այն թեզիսը, թե յուրաքանչյուր գիտության մեջ միայն նրա մեթոդոլոգիան է հանդիսանում վերնաշենք, ընկ. Զալոյանը պնդում է, որ արվեստի, գիտության և գրականության մեջ միայն նրանց մեթոդոլոգիական կողմն է հանդիսանում վերնաշենքային կատեգորիա, իսկ բուն գիտությունը, գրականությունը և արվեստը վերնաշենքային չեն (էջ 98)։ Ստեղծելով կյանքից կտրված այսպիսի մի սխեմա, ընկ. Զալոյանը դրանով իսկ հաշվի չի առնում ռեալ իրականությունը։ Մարքսիզմի կլասիկները երբեք որևէ դասակարգի քաղաքական հայացքները չեն անջատում նրա քաղաքականությունից, իրավական հասկացողությունները՝ իրավունքի պրակտիկայից, գիտության մեթոդոլոգիական հիմունքները՝ այդ գիտությունից, գեղարվեստական հայացքները՝ գրականությունից և արվեստից։ Այսպիսի մանիպուլացիաներ կատարելու դեպքում ոչինչ չի մնա ո՛չ գիտությունից, ո՛չ նրա մեթոդոլոգիայից, ո՛չ գրականության ու արվեստի գործերից, ո՛չ էլ նրանց համապատասխանող գեղարվեստական հայացքներից, քանի որ գիտական գործերում մարմնավորված է մեթոդոլոգիան, որը կարող է իր արտահայտությունը գտնել միայն գիտական աշխատություններում, բանի որ գեղարվեստական գործերում արտահայտված են նրանց հեղինակների գեղարվեստական հայացքները։

Ընկ. Զալոյանը ենթադրում է, որ եթե ընդունենք, թե գրականությունն ու արվեստը հանդիսանում են վերնաշենքային կատեգորիաներ, ապա անհնար կլինի հասկանալ, թե ինչու հունական և հռոմեական արվեստը, ինչպես նաև Վերածնության էպոխայի գեղարվեստական գործերը մինչև օրս էլ պահպանել են իրենց նշանակությունը։ Ընկ. Զալոյանը գտնում է, որ «ճշմարիտ-գեղեցիկը» չի կարող պատկանել վերնաշենքին, չի կարող ունենալ ո՛չ դասակարգային, ո՛չ էլ պարտիական բնույթ (էջ 97)։ Եթե համաձայնելու լինենք ընկ. Զալոյանի հետ այս հարցում, ապա պետք է ստիպված լինենք ընդունել, որ Մ. Գորկու, Վ. Մայակովսկու և սովետական լավագույն գրողների գործերը պետք է դուրս հանվեն «ճշմարիտ-գեղեցիկ» աշխատությունների թվից, կամ թե չէ՝ թողնելով այդ գործերը «ճշմարիտ-գեղեցիկ» գործերի թվում պետք է ընդունենք, որ նրանց հեղինակները հեռու էին կանգնած դասակարգային և պարտիական շահերից։ Իհարկե, այս երկու ենթադրություններն էլ աբսուրդ են։ Մայակովսկին խոսում էր իր «պարտիական գրքույկների հարյուր հատորների» մասին. միթե դա նշանակում է, որ այդ «պարտիական գրքույկները» չեն կարող համարվել «ճշմարիտ-գեղեցիկ» գործեր։ Ըստ ընկ. Զալոյանի ստացվում է, որ կա՛մ պիտի լինի պարտիականություն— և այդ դեպքում խոսք չի կարող լինել «ճշմարիտ-գեղեցկության» մասին, կամ թե չէ՝ պիտի լինի «ճշմարիտ-գեղեցիկ» գրական գործ— և այդ դեպքում խոսք չի կարող լինել պարտիականության մասին։ Դուրս է գալիս, որ «ճշմարիտ-գեղեցիկը», կամ ինչպես ընկ. Զալոյանն է ասում՝ «կյանքի ճշմարտությունը» պահանջում է անպարտիականություն... Ահա թե մինչև ուր են հասցնում ընկ. Զալոյանի դատողությունները։

Գրականության և գեղարվեստի իսկապես «ճշմարիտ-գեղեցիկ» գործերը գրավում են մեզ ոչ թե շնորհիվ իրենց անպարտիականության, այլ հենց իրենց պարտիականության շնորհիվ, այսինքն շնորհիվ այն բանի, որ նրանք արտացոլում են իրենց էպոխայի պրոգրեսիվ իդեաները։ Չի եղել և չի կարող լինել այնպիսի դեպք, որ հանճարեղ գեղարվեստական գործի հիմքում ընկած լինեն ռեակցիոն իդեաներ, որ նրա հեղինակը ոգեշնչված լինի հակաժողովրդական տեսակետներով։ Առաջավոր իդեաները միշտ էլ ունեն դասակարգային, պարտիական բնույթ, քանի որ նրանք բխվում են ռեակցիոն դասակարգերի իդեոլոգիայի հետ։ Գեղարվեստական մեծ գործերը թանկ են ողջ պրոգրեսիվ մարդկությանը հենց այն պատճառով, որ նրանք արտահայտում են աշխատավոր մասսաների, ժողովրդի շահերն ու ձգտումները։ Այդ մարտնչող պրոգրեսիվությամբ է բացատրվում, որ այդ հեղինակներին ժամանակակից ռեակցիոն դասակարգերը մերժել են և անվանարկել ինչպես նրանց, նույնպես և նրանց գործերը։

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու ընկ. Հ. Աղաջանյանը ասաց. հիմնական հարցը, որ կարմիր թելի նման անցնում է լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի աշխատությունների միջով, դա բազիսի ու վերնաշենքի և նրանց փոխհարաբերության խնդիրն է։ Բազիսի և վերնաշենքի մասին ընկեր Ստալինի ուսմունքի լույսի տակ մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ի՞նչ տեղ են գրավում և ի՞նչ նշանակություն ունեն բնական գիտությունները հասարակական կյանքի զարգացման մեջ։

Նախքան այդ խնդրին անցնելը, ես անհրաժեշտ եմ համարում կանգ առնել ընկ. Զալոյանի հոդվածում շոշափված այն հարցերի վրա, որոնք վերաբերում են վերնաշենքի խնդրին և բնական գիտություններին։

Ընկ. Զալոյանը կարծում է, որ վերնաշենքը իրենից ներկայացնում է հասարակության տարբեր փիլիսոփայական հայացքների ամբողջությունը, հայացքներ, որոնք արտահայտվում են քաղաքականության, իրավունքի, գրականության, արվեստի և այլ ասպարեզներում։ Դուրս է գալիս, որ վերնաշենքը կազմված է միմիայն փիլիսոփայական հայացքներից։ Բնորոշ է, որ ամփոփելով վերնաշենքի մասին իր բոլոր ասածները (տե՛ս էջ 100), ընկ. Զալոյանը ոչինչ չի ասում այն հիմնարկների մասին, որոնք կոչված են իրագործելու տվյալ հասարակության հայացքները հասարակական կյանքում։

Իմ կարծիքով ընկ. Զալոյանը սխալվում է, ենթադրելով, որ «հասարակության հայացքներ» ասելով, որոնց մասին խոսում է ընկեր Ստալինը, պետք է հասկանալ միայն իշխող դասակարգի ընդհանուր փիլիսոփայական սկզբունքները և իդեաները։ Հասարակության քաղաքական, իրավական և այլ հայացքները իրենց մեջ ներառնում են ոչ միայն ընդհանուր սկզբունքները, այլև դասակարգի պրակտիկ խնդիրները, որոնք բխում են այդ սկզբունքներից ու հայացքներից՝ դասակարգային պայքարի տվյալ էտապում։ Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ վերնաշենքը հասարակությանը սպասարկում է քաղաքական, իրավական, էսթետիկական և այլ իդեաներով և հասարակության համար ստեղծում է համապատասխան քաղաքական, իրավական և այլ հեմնարկներ։ Այս հարցերում ընկ. Զալոյանի սխալն այն է, որ նա մոռացության է մատնել հենց այն քաղաքական, իրավական և այլ հիմնարկները, որոնց մասին խոսում է ընկեր Ստալինը և որոնք հանդիսանում են հասարակության քաղաքական, իրավական ու այլ հայացքները կյանքում իրականացնողները։

Ընկ. Զալոյանը ճիշտ չի բացատրում նաև հասարակական գիտակցության ձևերի հարցը։ Իրավացիորեն ցույց տալով, որ վերնաշենքը, ինչպես նաև հասարակական գիտակցության ձևերը հանդիսանում են հասարակական կյանքի նյութական պայմանների արդյունք, նա սխալվում է, երբ ճգնում է ապացուցել, որ բազիսը, դուրս գալով իշխող դասակարգերի շրջանակներից, ստեղծում է «ընդհանուր հոգևոր արժեքներ»՝ հասարակության բոլոր դասակարգերի համար և որ այդ արժեքները անցնում են մի հասարակությունից մյուսին ու դառնում ամբողջ մարդկության սեփականությունը։ Նախ՝ ի՞նչ է նշանակում, թե բազիսը դուրս է գալիս իշխող դասակարգերի շահերի շրջանակից, ինչպե՞ս է կատարվում այդ և ի՞նչ պայմաններում։ Այնուհետև՝ պետք է պարզել այն խնդիրը, թե նոր հասարակությունն ինչպե՞ս է յուրացնում այն բոլոր արժեքավոր, պրոգրեսիվ ժառանգությունը, որ ստեղծվել է հին հասարակության ընդերքում։ Մեր կարծիքով նոր հասարակակարգը, որ հենվում է նոր տնտեսական բազիսի վրա, ժառանգում է հին հասարակությունից այն բոլոր արժեքներն ու նվաճումները, որոնք հանդիսանում են հասարակության պրոգրեսիվ ուժերի պայքարի արդյունքը, պայքար, որ նրանք մղում են իրենց դարն ապրող ուժերի դեմ։ Այսպես, օրինակ՝ արտադրողական ուժերը և հաղորդակցության միջոցները, որոնք ստեղծված են բուրժուական հասարակակարգում, վերջինիս տնտեսական բազիսի ոչնչացման ժամանակ ոչ թե ոչնչացվում են, այլ անցնում են սոցիալիստական հասարակակարգին։ Մարքսիզմ-լենինիզմը, իբրև բուրժուական հասարակության մեջ ստեղծված առաջավոր ուսմունք, այդ հասարակության ոչնչացման հետևանքով ո՛չ միայն չի ոչնչանում, այլ, ընդհակառակը, նոր, սոցիալիստական հասարակակարգում դառնում է իշխող և ուղղություն ցույց տվող գիտություն, սովետական մարդկանց հոգևոր հզոր զենքը՝ կոմունիզմի վերջնական հաղթանակի համար նրանց մղած պայքարում։ Բուրժուական հասարակության ընդերքում բնական գիտությունների կատարած հայտնագործումների ու նվաճումների լուսաբանությունը ժառանգորդը հանդիսանում է սոցիալիստական հասարակակարգը։ Այդ հասարակակարգը միակ իսկական ժառանգորդն է նաև այն բոլոր գեղարվեստական արժեքների, որոնք ստեղծվել են նախորդ հասարակությունների պրոգրեսիվ գրողների ու արվեստագետների կողմից։

Նոր հասարակակարգը հնից ժառանգում է գիտության և կուլտուրայի բոլոր առաջավոր ու արժեքավոր նյութերը՝ դիալեկտիկական բացատրման օրենքի հիման վրա։ Այդ օրենքի համաձայն նոր հասարակությունը, ժխտելով հին հասարակության ստեղծած բոլոր ռեակցիոն և իրենց դարն ապրած «արժեքները», հին հասարակությունից ժառանգում է առաջավոր և կենսունակ արժեքները, զարգացնելով դրանք նոր բազիսի պահանջներին ու խնդիրներին համապատասխան։ Եթե նոր տնտեսական բազիսը ստեղծվում է հին բազիսի բացատրման և նյութական արտադրողական ուժերի պահպանման ու զարգացման հիման վրա, ապա նոր հասարակության նոր վերնաշենքը ստեղծվում է հին վերնաշենքի բացատրման և հին հասարակության առաջավոր ուժերի ստեղծած հասարակական գիտակցության պրոգրեսիվ ձևերի պահպանման ու զարգացման հիման վրա։

Դասակարգային հասարակության մեջ հասարակական գիտակցության ձևերից միայն մեկն է,

որ, մեր կարծիքով, միատեսակ սպասարկում է ամբողջ հասարակությանը։ Մենք նկատի ունենք բնական գիտությունները։ Ընկ. Զալոյանը իրավացի է, երբ ընդունում է, որ բնական գիտությունները վերնաշենքի մեջ չեն մտնում և հետևապես դասակարգային բնույթ չունեն։ Բայց նա ճիշտ չէ, երբ դրանից հետո պնդում է, թե բնական գիտությունները և հասարակական գիտությունները այս տեսակետից ոչնչով չեն տարբերվում միմյանցից, քանի որ երկուսն էլ միատեսակ հասնում են օբեկտիվ ճշմարտության։ Եթե նրա ասածը ճիշտ լիներ հասարակական գիտությունների մասին, ապա իրավացիորեն կծագիր այն հարցը, թե ինչո՞ւմն է արտահայտվում հասարակական գիտությունների դասակարգային բնույթը դասակարգային հասարակությունում, որը ոչ մի տարակույս չի հարուցում մարքսիստների մեջ։ Մեր կարծիքով կասկածից վեր է, որ հասարակական գիտությունները մտնում են վերնաշենքի մեջ։ Ինչ վերաբերում է բնական գիտություններին, ապա այդ գիտությունները, որ ուսումնասիրում են շարժվող մատերիայի՝ իբրև օբեկտիվ ռեալականության՝ զանազան ձևերը, չեն կարող մտնել վերնաշենքի մեջ, որը կազմված է տվյալ անտագոնիստական հասարակության մեջ իշխող դասակարգի նեղ, սահմանափակ դասակարգային հայացքներից։

Ընկեր Մտալինը ուսուցանում է, որ բազիսի փոփոխվելու հետ փոփոխվում է նաև վերնաշենքը։ Կարելի՞ է արդյոք տարածել այս դրույթը բնական գիտությունների վրա։ Կարելի՞ է, օրինակ՝ ասել, թե կապիտալիստական վերնաշենքի ոչնչացման հետ մեկտեղ ոչնչանում են՝ իբրև վերնաշենք՝ ֆիզիկան, քիմիան, աստղաբաշխությունը և այլն և որ ամեն մի նոր բազիսի ժամանակ նրանք ծագում են նորից՝ իբրև նոր որակ, պահպանելով միայն հին վերնաշենքի հետ միասին ոչնչացված բնական գիտությունների «ռացիոնալ հատիկները»։ Այդ, իհարկե, չի կարելի ասել։ Այդ գիտությունների կատարած հայտնագործություններն ու նվաճումները մտնում են գիտության գանձարանը, եթե միայն նրանք հաստատվում են հաջորդ սերունդների գիտա-հետազոտական ուսումնասիրություններով և մարդկային հասարակության արտադրական պրակտիկայով։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ վերնաշենքը արտադրության հետ կապված է ոչ թե անմիջականորեն, այլ բազիսի միջոցով։ Ինչ վերաբերում է բնական գիտություններին, ապա նրանք, չմտնելով վերնաշենքի մեջ, սերտորեն կապված են մարդկանց արտադրողական գործունեության հետ, արտադրության հետ։ Իրենց զարգացման ընթացքում բնական գիտությունները ենթակա են այն նույն հիմնական օրինաչափություններին, որոնց ենթակա է հասարակության արտադրողական ուժերի զարգացումը։ Ինչպես որ հասարակության արտադրողական ուժերը չեն մտնում այդ հասարակության տնտեսական բազիսի մեջ, ճիշտ այդպես էլ բնական գիտությունները չեն մտնում վերնաշենքի մեջ։ Տնտեսական հին բազիսի վերացման ժամանակ արտադրողական ուժերը չեն ոչնչանում, այլ անցնում են նոր հասարակությանը և դառնում նոր բազիսի զարգացման ելակետը։ Ճիշտ այդպես էլ հին բազիսին համապատասխանող հին վերնաշենքի լիկվիդացման ժամանակ բնական գիտությունները չեն ոչնչանում, այլ դառնում են նոր հասարակության մեջ բնական գիտությունների նոր զարգացման ելակետը։ Հին բնագիտությունից անցնում են ոչ թե «ռացիոնալ հատիկները», այլ այն բոլոր նվաճումներն ու հայտնագործությունները, որ կատարել է հին բնագիտությունը և որոնք, արտացոլելով օբեկտիվ ճշմարտությունը, օժանդակում են բնությունը ավելի խորը ճանաչելու և մարդկանց իշխանությունը բնության վրա ավելի ուժեղացնելու գործին։

Երբ մենք պնդում ենք, որ բնական գիտությունները իրենց սպեցիֆիկ առանձնահատկությունների հետևանքով չունեն դասակարգային բնույթ և չեն մտնում վերնաշենքի մեջ, սրանից, իհարկե, չի հետևում, որ դասակարգերը անտարբեր են վերաբերվում այդ գիտությունների նկատմամբ։ Այդ գիտությունների այս կամ այն ուղղությամբ միակողմանի զարգացումը (օրինակ՝ ատոմական ֆիզիկայի գծով և այլն) անշուշտ հետևանք է նեղ դասակարգային շահերի, մասնավորապես ժամանակակից կապիտալիստական երկրներում։ Բացի դրանից, այդ գիտություններով զբաղվող գիտնականները ևս, երբ հարկ է լինում բացատրել բնության զարգացման ընդհանուր օրինաչափությունները, երբ պետք է լինում պարզել թե ի՞նչ մեթոդներով է հարկավոր կատարել բնական երևույթների ուսումնասիրությունը և փիլիսոփայական ի՞նչ թեորիայով պետք է առաջնորդվել այդ երևույթները բացատրելիս,— այդ դեպքում նրանք տարերայնորեն կամ գիտակցաբար կանգնում են փիլիսոփայական այս կամ այն ուղղության վրա, կանգնում են որոշակի դասակարգի դիրքերում։

Լեզվաբանության վերաբերյալ ընկեր Ստալինի աշխատությունները,— ասաց իր ելույթում ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Հ. Սալախյանը,— հսկայական նշանակություն ունեն մարքս-լենինյան էսթետիկայի մի շարք կարևոր պրոբլեմների լուծման համար։ Ընկ. Զալոյանի քննարկվող հոդվա-

ծում շոշափված են Լսթետիկային մի շարք հարցեր։ Ես ցանկանում եմ կանգ առնել ընկ. Զալոյանի միայն երկու գրույթների վրա։ Դրանցից առաջինը այն է, թե ինչպե՞ս է հասկանում ընկ. Զալոյանը Բալզակի մասին Էնգելսի հայտնի ասույթը, իսկ երկրորդը այն, թե ինչպե՞ս է նա հասկանում արվեստի մեջ «ճշմարիտ-գեղեցիկի» Լուծությունը։ Ինձ թվում է, որ այս հարցերում ընկ. Զալոյանը թույլ է տվել լուրջ սխալներ, հեռացել է մարքս-լենինյան Լսթետիկայի դիրքերից և ըստ Լուծյան փորձել է վերակենդանացնել մեր գիտության կողմից վաղուց մերժված մի կոնցեպցիա։

Ընկ. Վ. Զալոյանի հոդվածում այս հարցերից առաջինի մասին ասվածից հետևում է, որ, առաջին՝ անտագոնիստական հասարակության մեջ արվեստի մեծ վարպետների գեղարվեստական գործունեությունը եղել է հակասական և, երկրորդ՝ որ այդ հակասության Լուծությունը կայանում է նրանում, որ միմյանց հետ բախվում են իրականության ռեալիստական վերարտադրումը (ավելի որոշակի ասած՝ ռեալիստական մեթոդը) և արվեստագետի աշխարհայացքը («փիլիսոփայական տեսակետները»)։ Այսպիսի պնդման հետ դժվար է համաձայնվել։ Չէ՞ որ անտագոնիստական հասարակության մեջ էին ստեղծագործում այնպիսի մեծ արվեստագետներ, ինչպես Նեկրասովը, Սալտիկով-Շչեդրինը, Չերնիշևսկին (որոնց անվան հետ առաջին հերթին կապված են 19-րդ դարի ռուս գրականության լավագույն տրադիցիաները), որոնց ստեղծագործությունը բոլորովին էլ աչքի չի ընկնում իր հակասականությամբ, այլ, ընդհակառակը, հանդիսանում է զարմանալի միասնականության, արտակարգ ամբողջականության օրինակ։ Չենք խոսում արդեն Մաքսիմ Գորկու մասին, որ գեղարվեստական խոսքի մեծագույն վարպետ էր և իր հանճարեղ երկերի որոշ մասը ստեղծել է դասակարգային-անտագոնիստական հասարակության պայմաններում։ Այստեղից հետևում է, որ ընկ. Զալոյանի դրույթի առաջին մասը կարիք ունի լուրջ ուղղման, որին, ցավոք սրտի, մենք չենք հանդիպում նրա հոդվածի հետագա շարադրանքի մեջ։

Ընկ. Վ. Զալոյանի հոդվածում ասված է, որ Էնգելսը Բալզակի մասին և Լենինը՝ Տոլստոյի մասին խոսելիս իբր թե նկատի են ունեցել նրանց ռեալիստական մեթոդի և աշխարհայացքի միջև եղած հակասությունը։ Մենք կարծում ենք, որ այս հարցում ևս ընկ. Զալոյանը սխալվում է։ Էնգելսը խոսում է ո՛չ թե գեղարվեստական մեթոդի և աշխարհայացքի հակասության, ո՛չ թե նրանց բախման մասին, այլ այն հակասությունների մասին, որոնք կան Բալզակի բուն աշխարհայացքի մեջ։ Բալզակի համար խորթ չէին արիստոկրատիայի քաղաքական նախապաշարումները (Էնգելսը գործածում է հենց «նախապաշարումներ» բառը, և պատահական չէ, որ նա չի խոսում Բալզակի աշխարհայացքի կամ փիլիսոփայական հայացքների մասին), նա պասիվ կերպով ընդունում էր արիստոկրատիայի քաղաքական հայացքները։ Բայց Բալզակը մեծ ռեալիստ արվեստագետ էր, և նրա աշխարհայացքը ամենից ավելի լիակատար ձևով արտահայտված է նրա գեղարվեստական գործերում, որտեղ և արտահայտված է հեղինակի ինքնուրույնությունը։ Այստեղ է, որ հանդես է գալիս Բալզակի մեծությունը, քանի որ նա ո՛չ թե պասիվորեն շարադրում էր իր դասակարգի նախապաշարումները, այլ իր սեփական հայացքները կյանքի նկատմամբ, հայացքներ, որոնք ստուգված են իր կյանքի փորձով և ձևավորվել են ո՛չ առանց այլ դասակարգերի կենսափորձի ազդեցության։ Բալզակի գիտակցության և նրա նախապաշարումների միջև ընթացող պայքարով է, որ պայմանավորված է նրա աշխարհայացքի հակասական բնույթը, որը հստակորեն արտահայտված է նրա բոլոր ստեղծագործությունների մեջ։

Պետք է ասել, որ նույն կարգի սխալ թույլ է տալիս ընկ. Զալոյանը նաև այն ժամանակ, երբ խոսում է Տոլստոյի ստեղծագործության մասին։

Երկրորդ հարցի մասին ընկ. Զալոյանը իր հոդվածում գրում է, որ «ճշմարիտ-գեղեցիկը» արվեստի մեջ չի կարող պատկանել վերնաշենքին, չի կարող ունենալ ո՛չ դասակարգային, ո՛չ էլ պարտիական բնույթ։ Ընկ. Զալոյանի այս պնդումը առավել ևս տարօրինակ է թվում այն պատճառով, որ նրան անշուշտ հայտնի է ռուս մեծ ռևոլուցիոներ-դեմոկրատ Չերնիշևսկու ուսմունքը գեղեցիկի մասին։ Գեղեցիկի հասկացությունը դա հասարակական և պատմական հասկացություն է։ Գեղեցիկը արվեստի մեջ դա մի ինչ-որ վերացական, վերդասակարգային, վերպարտիական, անորոշ հասկացություն չէ։ Ընդհակառակը, յուրաքանչյուր դասակարգ գեղեցիկի մասին մշակում է իր սեփական հասկացությունը, իսկ սրանից հետևում է, որ յուրաքանչյուր դասակարգ իր որոշակի տեսակետն ունի արվեստի մեջ «ճշմարիտ-գեղեցիկի» մասին։ Գեղեցիկի վերդասակարգային բնույթի մասին խոսակցությունները պետք էին «մաքուր արվեստի» տեսաբաններին նրա համար, որպեսզի հնարավոր լիներ քողարկել իրենց սեփական դասակարգային հասկացությունը գեղեցիկի մասին, Լսթետիկայի մեջ անցկացնել իրենց սկզբունքները և այդպիսով ամբողջ հասարակության վզին փաթա-

թել իրենց դասակարգային հասկացությունը գեղեցիկի մասին։ Հայտնի է, որ Լենինը իր ժամանակ ջախջախիչ հարված հասցրեց բուրժուազիայի իդեոլոգներին, որոնք արվեստի անպարտիականության լոզունգի տակ ցանկանում էին արվեստի մեջ զարգացնել բուրժուական պարտիականությունը։ Ինչպե՞ս կարելի է չընդունելով, որ արվեստը պարտիական բնույթ ունի, խոսել միաժամանակ այն մասին, թե «ճշմարիտ-գեղեցիկը» արվեստի մեջ չունի ո՛չ դասակարգային, ո՛չ էլ պարտիական բնույթ։ Այսպիսի պնդումը, որ անում է ընկ. Ջալոյանը, նշանակում է զրկել արվեստը նրա իդեական նպատակասլացությունից, վերափոխիչ ուժից։ Մեր կարծիքով արվեստի միայն այն գործերն են մնայուն, միայն այն գործերն են «ճշմարիտ-գեղեցիկ», որոնք ստեղծված են տվյալ էպոխայի ոեոլուցիոն դասակարգի դիրքերից, ոեոլուցիոն պարտիականության գիրքերից։ Այդ է, որ ապահովում է կյանքի ճշմարտացի արտացոլումը գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Այդ են վկայում համաշխարհային կլասիկայի բոլոր գործերը, այդ են վկայում Գորկու և Մայակովսկու անմահ, ճշմարտապես գեղեցիկ գրվածքները, որոնք երբեք չեն կորցնի իրենց դասակարգային և պարտիական բնույթը։

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ. Պետրոսյանը իր ելույթում ասաց. ընկ. Ջալոյանի հոդվածում արծարծվում են պատմական մատերիալիզմի մի շարք կարևոր հարցեր, և չի կարելի համաձայնվել որոշ ընկերների, մասնավորապես ընկ. Ղ. Այվազյանի այն կարծիքին, (որ արտահայտել է նա «Գրական թերթ»-ում հրապարակված իր հոդվածում), թե ընկ. Ջալոյանը դիսկուսիայի առարկա է դարձրել միայն էլեմենտար հարցերը։

Այդ կարևոր խնդիրներից մեկը վերնաշենքի հարցն է։ Իրավացիորեն հասարակական գիտակցության ձևերը բաժանելով վերնաշենքից, ընկ. Ջալոյանը կոպիտ սխալ է կատարում, երբ դրանից հետո եզրակացնում է, որ միայն հասարակական գիտակցության ձևերը կարող են ստեղծել պրոգրեսիվ, ոչ անցողիկ, «համընդհանուր գիտական և հոգևոր արժեքներ»։ Ըստ ընկ. Ջալոյանի, վերնաշենքի մեջ մտնում է միայն այն, ինչ անցողիկ է և ունի դասակարգային բնույթ, այն, ինչ որ ընկ. Ջալոյանի խոսքերով ասած՝ «չի կարող ունենալ համընդհանուր գիտական արժեքի բնույթ»։

Վերնաշենքի մասին այդպիսի սխալ, աբստրակտ-տրամաբանական դատողությունների շնորհիվ, վերնաշենքի վերլուծման կոնկրետ-պատմական մոտեցման բացակայության շնորհիվ, որի հետևանքով փաստորեն նույնացվում են բուրժուական և սոցիալիստական վերնաշենքները, ընկ. Ջալոյանը հանգում է մի այլ սխալ եզրակացության, թե՝ ինչ որ դասակարգային է, կարող է ունենալ միայն ռեակցիոն բնույթ և չի կարող արտահայտել օբեկտիվ ճշմարտությունը։

Ընկ. Ջալոյանը հաշվի չի առնում, որ պրոլետարիատի դասակարգային շահերը համընկնում են պատմական զարգացման օբեկտիվ ընթացքին, որ նրանք դասակարգային շահերի շրջանակներից դուրս են գալիս, արտահայտում են ժողովրդական լայն մասսաների շահերը և իրենց վերջնական նպատակներով համընկնում են ողջ պրոգրեսիվ մարդկության շահերին։ Ընկ. Ջալոյանը հաշվի չի առնում նաև սոցիալիստական վերնաշենքի սպեցիֆիկ առանձնահատկությունները, նրա սկզբունքային որակական տարբերությունները դասակարգային ներհակ հասարակակարգի վերնաշենքից։

Ընկ. Պետրոսյանը սխալ է համարում վերնաշենքի այն բնորոշումը, որ տրված է ընկ. Ջալոյանի հոդվածում։ Ըստ այդ բնորոշման,— ասում է նա,— վերնաշենքի մեջ մտնում է միայն փիլիսոփայությունը, ավելի ճիշտ՝ փիլիսոփայական հայացքները, մեթոդոլոգիան և աշխարհայացքային սկզբունքները։ Այսպիսով, ընկ. Ջալոյանը վերնաշենքի մեջ մտցնում է ոչ թե «մաքուր փիլիսոփայությունը», որի տակ նա հասկանում է այսպես կոչված օնտոլոգիան և գնոսեոլոգիան, այլ միայն փիլիսոփայական հայացքները։ Ընկ. Ջալոյանի այս դատողությունները սխոլաստիկ բնույթ ունեն և չեն բխում վերնաշենքի այն կլասիկ բնորոշումից, որ տվել է ընկեր Ստալինը։

Խոսելով այն մասին, որ վերնաշենքը հասարակության քաղաքական, իրավական, կրոնական, գեղարվեստական, փիլիսոփայական հայացքների և դրանց համապատասխանող քաղաքական, իրավական և այլ հիմնարկների ամբողջությունն է, ընկեր Ստալինը առաջին պլանի վրա է դնում քաղաքական և իրավական հայացքները և նրանց համապատասխանող հիմնարկները։ Դա բնական է, քանի որ այդ հայացքներն ու հիմնարկները ավելի մոտ են կանգնած բազիսին և անմիջականորեն կրում են վերջինիս ազդեցությունը։ Վերնաշենքի ստալինյան բնորոշումը բացահայտում է քաղաքական վերնաշենքի, քաղաքական ու իրավական հայացքների և նրանց համապատասխանող հիմնարկների վճռական և առաջատար դերը՝ հասարակության զարգացման գործում։ Վերնաշենքի մեջ մտցնելով միայն հասարակության փիլիսոփայական հայացքները, ընկ. Ջալոյանը մոռացության է տվել ու թերագնահատել է քաղաքականության և իրավունքի, ինչպես նաև քա-

զաքական ու իրավական հիմնարկների վճռական դերը։ Դրա հետևանքով ստացվել է այն, որ բազիսի և վերնաշենքի հարցերին նվիրված իր հոդվածում ընկ. Զալոյանը չի խոսում քաղաքական, իրավական և այլ հիմնարկների մասին, այն վճռական ու առաջատար դերի մասին, որ մեր հասարակակարգի զարգացման գործում խաղում են սովետական պետությունը և կոմունիստական պարտիան։

Ընկ. Մ. Պետրոսյանը քննադատում է մի շարք ընկերների տեսակետն այն մասին, թե ամեն մի հասարակակարգի վերնաշենքի մեջ, բացի իշխող դասակարգի իդեաներից ու թեորիաներից և նրանց համապատասխանող հիմնարկներից, մտնում են նաև շահագործվող դասակարգերի իդեաներն ու թեորիաները և դրանց համապատասխանող կազմակերպությունները։ Ըստ այդ տեսակետի կողմնակիցների, ստացվում է, որ բուրժուական վերնաշենքի մեջ մտնում են նաև մարքսիզմը և կոմունիստական պարտիան,— մի պնդում, որի հետ համաձայնվել չի կարելի։

Ընկ. Պետրոսյանը գտնում է, որ վերնաշենքը արտացոլում է միայն տնտեսապես իշխող դասակարգի իդեաները, որ շահագործվող դասակարգերի և մասնավորապես պրոլետարիատի պրոգրեսիվ իդեաներն ու թեորիաները, ինչպես նաև պրոլետարիատի ռևոլուցիոն կազմակերպությունները բուրժուական վերնաշենքի մեջ չեն մտնում, այլ հանդիսանում են ապագա պրոլետարական վերնաշենքի էլեմենտները, վերնաշենք, որը ստեղծվում է պրոլետարիատի ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով։

Ելնելով այն սխալ դրույթից, թե միայն այն ամենը, ինչ անցողիկ բնույթ չունի, կապված է հասարակական գիտակցության ձևերի հետ,— ընկ. Զալոյանը վերնաշենքից դուրս է հանում գրականությունը, արվեստը և հասարակական գիտությունները։ Այդ բանի հետ համաձայնվել չի կարելի։ Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ բազիսը հասարակության տնտեսակարգն է նրա զարգացման տվյալ էտապում։ Հետևապես, որևէ հասարակակարգի բազիսը վերլուծելիս մենք պարտավոր ենք ուսումնասիրել այդ բազիսը՝ իր կոնկրետ-պատմական զարգացման մեջ։ Այդպիսի դիալեկտիկական կոնկրետ-պատմական մոտեցում պետք է ցուցաբերել նաև վերնաշենքը ուսումնասիրելու ժամանակ։ Այդ դեպքում մենք պետք է միմյանցից տարբերենք նոր ծագող ու զարգացող վերնաշենքն այն վերնաշենքից, որի ծնող բազիսը արդեն դառնում է պատմականորեն ռեակցիոն ֆակտոր։

Նոր ծագող, այսինքն՝ պատմականորեն պրոգրեսիվ ամեն մի բազիսի վերնաշենքի մեջ կան պրոգրեսիվ իդեաներ, որոնք արտացոլում են հասարակության պատմականորեն պրոգրեսիվ առաջընթացը։ Այդպիսի պրոգրեսիվ բնույթ ուներ, օրինակ, անգլիական կլասիկ քաղաքատնտեսությունը, որը հետագայում դարձավ մարքսիզմի տեսական աղբյուրներից մեկը։ Ընկ. Զալոյանի և մի քանի այլ ընկերների աբստրակտ և մետաֆիզիկ մոտեցումը վերնաշենքի հարցերին, հանգեցրել է նրանց այն սխալ տեսակետին, թե հաջորդական կապերը պետք է փնտրել միայն ոչ վերնաշենքային երևույթների մեջ, թե, հետևաբար, անհրաժեշտ է վերնաշենքից դուրս հանել գրականությունն ու արվեստը։ Համաձայնվելով ընկ. Զալոյանի հետ այն հարցում, որ բնական գիտությունները վերնաշենքի մեջ չեն մտնում, որ այդ գիտություններում վերնաշենքային են միայն նրանց աշխարհայեցողական սկզբունքները, ընկ. Մ. Պետրոսյանը քննադատում է պրոֆեսոր Բաշինջաղյանի տեսակետն այդ հարցում, որ բնական գիտությունները և նույնիսկ տեխնիկական-կիրառական գիտությունները ամբողջովին մտնում են վերնաշենքի մեջ։ Անշուշտ այդ չի նշանակում, թե ոչ մի սկզբունքային տարբերություն չկա բնական գիտությունների և հասարակական գիտությունների միջև, ինչպես կարծում է ընկ. Զալոյանը, թե դրանք բնության և մարդկային հասարակության վերաբերյալ միասնական գիտության երկու բաժիններն են։ Ընկ. Զալոյանի այս պնդումը ճիշտ է միայն սովետական գիտության համար, որի բոլոր ճյուղերը հենվում են բնության և մարդկային հասարակության զարգացման մասին միակ ճիշտ գիտական թեորիայի՝ մարքսիստական դիալեկտիկական մատերիալիզմի վրա։

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու ընկ. Հ. Ասլանյանը նույնպես գտնում է, որ սխալ է այն տեսակետը, թե մարքսիզմը սոցիալիստական հասարակակարգի հաղթանակից առաջ մտնում էր բուրժուական հասարակության վերնաշենքի մեջ։ Այսպես պնդելու դեպքում,— ասում է նա,— պետք է նաև ընդունել, որ բուրժուական հասարակության մեջ գոյություն ունի երկու բազիս։ Մեր պարտիայի առաջին ծրագրի մասին իր հոդվածում Լենինը խոսում է բուրժուական կացութաձևի որոշ միասնականության մասին, իսկ այդ ընկերները մոռանում են Լենինի այս խոսքերը։ Նրանց պնդումը հակասում է նաև վերնաշենքի այն բնորոշմանը, որ տվել է ընկեր Ստալինը։ Նրանց հետ համաձայնվելու դեպքում պետք է ընդունել, որ բուրժուական բազիսը ծնում է պրոլետարական վերնաշենք,— մի բան, որ անհեթեթություն է։

Ընկ. Ասլանյանը գտնում է, որ անշուշտ պետք է միմյանցից զանազանել հասարակական գիտակցության ձևերը և վերնաշենքը։ Հա-

սարակական գիտակցության ձևերի և վերնաշենքի միջև գոյություն ունի այնպիսի փոխհարաբերություն, որպիսին գոյություն ունի ամբողջի և նրա մասի միջև։ Վերնաշենքի մեջ չկան այնպիսի իդեաներ, որոնք չմտնեին հասարակական գիտակցության ձևերի մեջ, բայց հասարակական գիտակցության ո՛չ բոլոր ձևերն են, որ հանդիսանում են վերնաշենք։ Չի կարելի համաձայնվել ընկ. Զալոյանի հետ, երբ նա, օրինակ՝ միմյանցից անջատում է կրոնը և կրոնի փիլիսոփայությունը։ Ինչպե՞ս կարելի է պնդել, թե կրոնը վերնաշենք չէ, այսինքն զուրկ է դասակարգային բնույթից։ Ինչպե՞ս կարող էր ընկ. Զալոյանը մոռանալ, որ մարքսիզմի կլասիկները բազմաթիվ առիթներով խոսել են այն մասին, որ կրոնը դասակարգային պայքարի զենք է։ Նույնը կարելի է ասել նաև այն մասին, որ ընկ. Զալոյանը ոչ մի հիմք չունի անջատելու իրավունքը՝ իրավական հայացքներից, փիլիսոփայությունը՝ փիլիսոփայական հայացքներից, պատմությունը՝ պատմական հայացքներից և այլն։ Այս հարցում ընկ. Զալոյանը թույլ է տվել կոպիտ սխալ։

Խոսելով արվեստի հարցերի մասին, ընկ. Զալոյանը պնդում է, թե իրականության արտացոլումը իդեոլոգիա չէ, իդեոլոգիա է միայն այդ իրականությունը վերափոխելու ձգտումը։ Նա պնդում է նաև, որ մի բան է գրական կերպարը, մի այլ բան՝ հեղինակի փիլիսոփայությունը, որը ոչ մի կապ չունի այդ կերպարի հետ։ Նրա այս պնդումներն անհիմն են ու անհեթեթ. անհնարին է պատկերացնել գրական կերպարը առանց փիլիսոփայական հայացքների։ Գրականության և արվեստի բոլոր մեծ գործերը ստեղծվել են շնորհիվ նրանց հեղինակների խորը իդեաների։ Այս հարցերի կապակցությամբ միանգամայն ճիշտ էր ընկ. Հ. Սալախյանը, երբ նա խոսում էր այն մասին, որ ընկ. Զալոյանը սխալ է բացատրում Էնգելսի խոսքերը Բալզակի մասին և Լենինի խոսքերը՝ Տոլստոյի մասին։

Իր ելույթում ընկ. Ա. Ջրաղացպանյանը կանգ առավ այն հարցի վրա, թե ինչպես պետք է հասկանալ ընկեր Ստալինի դրույթը՝ հին որակից նոր որակին անցնելը պայթյունով և առանց պայթյունի կատարվելու մասին։ Չհամաձայնվելով այս հարցի կապակցությամբ ընկ. Զալոյանի տեսակետին, նա գտնում է, որ այստեղ գլխավորը այն է, որ պայթյունի միջոցով հին որակից նոր որակին անցնելու դեպքում, երբ խոսքը վերաբերում է սոցիալական երևույթներին, նոր որակը երևան է գալիս հնի ավերակների վրա, հնի միանգամյա ոչնչացման հիման վրա, իսկ առանց պայթյունի հին որակից նոր որակին կատարվող անցման ժամանակ հինը չի ոչնչացվում, այլ նորի դեմ մղած իր պայքարում աստիճանաբար մահանում է։ Նորի գոյացումը իրենից ներկայացնում է նոր որակի էլեմենտների աստիճանական կուտակման և հին որակի էլեմենտների աստիճանական մահացման պրոցես։

Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու ընկ. Ղ. Այվազյանը ասաց. ես կարծում եմ, որ «Գրական թերթ»-ում տպված իմ հոդվածի վերնագիրը՝ «Դիսկուսիոն կարգով...» անհաջող վերնագիր է և կարող է տեղիք տալ կարծելու, որ ես հանդես եմ գալիս գիտական դիսկուսիաների դեմ։ Ես ընդունում եմ, որ սխալվել եմ՝ այդպես վերնագրելով իմ հոդվածը, բայց ես կարծում եմ, որ ընկ. Զալոյանի հոդվածում տեղ են գտել մի շարք այնպիսի խնդիրներ, որոնք վաղուց պարզված են մարքս-լենինյան թեորիայի կողմից և ոչ մի դիսկուսիայի ենթակա չեն։

Մի կողմ թողնելով այն հարցերը, որ շոշափված են իմ հոդվածում, ես ցանկանում եմ համառոտակի բացատրել, թե ինչպես եմ ես հասկանում բազիսը ու նրա վերնաշենքը։ Ինչպես որ յուրաքանչյուր դասակարգային հասարակության մեջ հակասական ու երկակի բնույթ ունի բազիսը, այնպես էլ հակասական ու երկակի բնույթ ունի նրա վերնաշենքը։ Ինչպես բազիսում, այնպես էլ վերնաշենքում պայքարը գնում է այդ երկու հակասական մասերի միջև, որի հետևանքով հաղթանակում է նոր բազիսը՝ իր նոր վերնաշենքով։ Ես կարծում եմ, որ ճիշտ չէ ընկ. Զալոյանի պնդումն այն մասին, թե թշնամական դասակարգերի բաժանված հասարակության մեջ որոշ դեպքերում պայթյունը ռևոլուցիայի ժամանակ պարտադիր չէ։ Ճիշտ չէ նաև ընկ. Զալոյանի այն պնդումը, թե վերնաշենքի մեջ մտնում են միայն փիլիսոփայական հայացքները։ Ճիշտ չէ նրա այն դրույթը, թե ոչ մի սկզբունքային տարբերություն չկա հասարակական գիտությունների և բնական գիտությունների միջև։ Գիտության համար կարևոր է ո՛չ թե այն ընդհանուրը, որ գոյություն ունի հասարակական երևույթների մեջ, այլ նրանց սպեցիֆիկ առանձնահատկությունները, մասնավորապես գրականության ու արվեստի սպեցիֆիկումը։ Ընկ. Զալոյանը ճիշտ չէ նաև այն դեպքում, երբ խոսում է Տոլստոյի ստեղծագործության հակասական բնույթի մասին. հակասությունը ո՛չ թե Տոլստոյի մեթոդի և աշխարհայացքի մեջ է, այլ նրա բուն աշխարհայացքի մեջ, նրա ստեղծագործության մեջ, նրա ուսմունքի մեջ։

Ընկ. Ս. Ղազարյանը իր ելույթում մատնանշեց, որ ընկ. Զալոյանն իր հոդվածում ասում է, թե վերնաշենքը նույնպես ենթակա է հակա-

սությունների միասնության ու պայքարի օրենքին, բայց նա հետագայում շեղվում է այդ ճիշտ գրույթից և պնդում, թե վերնաշենքը ընդգրկում է միայն իշխող դասակարգի իդեաները, այսինքն՝ միայն իշխող իդեաները։ Այս պնդումից հետևում է, որ վերնաշենքը մի ամբողջական բան է, որի մեջ հակադիր էլեմենտներ չկան։ Սա հակասում է մարքսիստական այն դրույթին, թե չի կարող լինել զարգացում՝ առանց հակասությունների պայքարի։ Ընկ. Զալոյանն իր հոդվածում պնդում է, որ վերնաշենքի մեջ մտնում են միայն փիլիսոփայական իդեաները, որոնք, նրա կարծիքով, հանդիսանում են միայն իշխող իդեաներ։ Նա իրավացիորեն գտնում է, որ բազիսի մեջ մտնում են հակադիր էլեմենտներ և որ վերնաշենքը հանդիսանում է բազիսի արտացոլումը։ Ստացվում է, որ հակասական բազիսի արտացոլումը հանդիսանում է ոչ հակասական վերնաշենքը։ Նման պնդումն առնվազն անհետևողական է։ Պրոգրեսիվ իդեաները նույնպես մտնում են վերնաշենքի մեջ, թեպետ և նրանք ոչ թե ամրապնդում, այլ քայքայում են տվյալ բազիսը։ Այս հարցը լուծելիս պետք է նկատի առնել վերնաշենքը՝ իբրև մի ամբողջություն, որը ոչ թե քայքայում, այլ ամրապնդում է իր բազիսը։ Հայտնի է, որ Տոլստոյի, Բելինսկու, Պուշկինի և այլ խոշոր գրողների ստեղծագործության մեջ կան ոչ քիչ թվով հակասություններ. եթե կարելի լիներ խոսել այն մասին, որ վերնաշենքի մեջ մտնում են միայն իշխող ռեակցիոն իդեաները, ապա պետք էր նաև ասել, որ այդ գրողների ստեղծագործությունը մեկ մտնում էր վերնաշենքի մեջ, մեկ չէր մտնում։ Ընկ. Զալոյանը գտնում է, որ օբեկտիվ ճշմարտությունը դասակարգային բնույթ չունի, համամարդկային է և չի մտնում վերնաշենքի մեջ։ Այստեղից ստացվում է, որ այն բոլորը, ինչ դասակարգային բնույթ ունի, զուրկ է օբեկտիվ ճշմարտություն լինելու հնարավորությունից։ Պասկալից դուրս է, որ նման պնդումը հակասում է օբեկտիվ ճշմարտության մասին մարքսիստական ուսմունքին։

Փիլիսոփայական սեկտորի վարիչի պաշտոնակատար ընկ. Վ. Ղազանչյանը իր ելույթում ասաց. լեզվաբանության հարցերին նվիրված իր հանճարեղ աշխատությունների մեջ ընկեր Ստալինը մի անգամ ևս ընդգծելով մարքսիզմի ստեղծագործական բնույթը, ցույց տվեց, որ նա չի կարող կանգնած մնալ մի կետում, այլ շարունակ զարգանում է ու կատարելագործվում։ Այդ աշխատությունների մեջ ընկեր Ստալինը նոր, ավելի բարձր աստիճանի բարձրացրեց պատմական մատերիալիզմի մի այնպիսի կարևոր հարց, ինչպիսին է բազիսի ու վերնաշենքի փոխհարաբերության և հասարակության զարգացման գործում նրանց դերի հարցը։

Մեր քննարկմանը դրված հոդվածում ընկ. Զալոյանը շոշափում է պատմական մատերիալիզմի ամենակարևոր հարցերից մեկը՝ բազիսի ու վերնաշենքի էության ու նրանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերության հարցը։ Ուսումնասիրելով այդ հարցը, ընկ. Զալոյանը տեսական ճիշտ դիտողությունների հետ միևնույն ժամանակ իր հոդվածում առաջ է քաշում մի շարք վիճելի խնդիրներ, որոնք կարող են լուծվել միայն կոլեկտիվ ջանքերով։

Քննարկելով բնական և հասարակական գիտությունների փոխհարաբերության հարցը, ընկ. Զալոյանը հենվում է ընկեր Ստալինի տված այն դրույթի վրա, թե հասարակական գիտությունները նույնպես կարող են դառնալ ճիշտ գիտություններ, ինչպես, օրինակ՝ բիոլոգիան։ Բայց դրանից անմիջապես հետո ընկ. Զալոյանը եզրակացնում է, որ ոչ մի սկզբունքային տարբերություն չկա բնական և հասարակական գիտությունների միջև։ Նրա այս սխալ պնդումը հետևանք է այն բանի, որ նա մոռանում է, որ ընկեր Ստալինը խոսում է գիտության մասին ոչ թե ընդհանրապես, այլ մարքսիստական գիտության մասին՝ բնության և հասարակության վերաբերյալ, որ այդ գիտությունների տարբերությունը անհետանում է միայն այն ժամանակ, երբ նրանք երկուսն էլ հենվում են միակ ճիշտ մարքսիստական փիլիսոփայության վրա, որ այդ բանը կարող է տեղի ունենալ միայն սոցիալիզմի պայմաններում։ Այս կարևոր ճշտումը ընկ. Զալոյանը պետք է որ մտցնի իր տեսակետի մեջ, հակառակ դեպքում հարցի աբստրակտ քննարկման պայմաններում կրստացվի, որ թե՛ բուրժուական և թե՛ սոցիալիստական հասարակակարգում բիոլոգիան և սոցիոլոգիան հավասարապես ճշգրիտ գիտություններ են բնության և մարդկային հասարակության մասին,— մի պնդում, որ հիմնովին սխալ է։

Խոսելով ռևոլուցիաների մասին ընկ. Զալոյանը գրում է. «Պայթյունի միջոցով նոր որակին անցնելը նշանակում է հնի միանգամյա ոչնչացում և նորի ստեղծում»։

Ռևոլուցիայի և պայթյունի հարցը ընկ. Զալոյանը քննարկում է նախ ընդհանրապես, և հետո միայն ուսումնասիրում է այն սոցիալական ռևոլուցիաների օրինակով։ Ընկեր Ստալինը խոսելով ռևոլուցիայի մասին իբրև հնի միանգամյա ոչնչացման և նորի կառուցման ակտի, իր աշխատության մեջ պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ չի կարելի «միանգամյա ոչնչացում» հասկացությունը շփոթել «հանար-

ծակի պայթյունն հասկացության հետ։ Նա գրում է, որ մարքսիզմը զարգացման պրոցեսում չի ճանաչում հանկարծակի պայթյուններ, գոյություն ունեցողի հանկարծակի կործանում և նորի հանկարծակի կազմություն։ Այս հարցերը ընկ. Զալոյանի հոդվածում, ինչպես հարկն է, մշակված չեն։

Ընկ. Զալոյանի հոդվածի 3-րդ խոցելի կողմն այն է, որ նա ճիշտ չի ըմբռնել վերնաշենքի էությունը։ Նա իր հոդվածում գտնում է, որ վերնաշենքը խստորեն տարբերվում է հասարակական գիտակցության ձևերից, ըստ որում վերջինները, նրա կարծիքով, ավելի լայն են, քան վերնաշենքը, որից ընկ. Զալոյանը կարծես թե հակված է դուրս հանելու քաղաքական, իրավական և այլ հիմնարկները։

Ինչպես տեսնում ենք, այս հարցում ևս ընկ. Զալոյանը կոնկրետ-պատմական մոտեցում չի ցուցաբերել։ Եթե նա իր տեսակետը կոնկրետացներ բուրժուական հասարակակարգի նկատմամբ, ապա նա իրավացի կլիներ, քանի որ այդ հասարակակարգում հասարակական գիտակցության ձևերը իսկապես ավելի լայն են, քան վերնաշենքը, մի բան, որը չի կարելի ասել սոցիալիստական հասարակության մասին։

Իր բնույթով հակասական բուրժուական անտագոնիստական բազիսը ծնում է հասարակական գիտակցության բազմաթիվ ձևեր։ Բացի բուրժուական վերնաշենքից, որի մեջ մտնում են իդեոլոգիայի պաշտոնական ձևերը, և հասարակական գիտակցության այնպիսի ձևերը, որոնք նպաստում են տվյալ հասարակակարգի ձևավորմանն ու ամրապնդմանը (ռեակցիոն դեկադենտական արվեստն ու գրականությունը, կրոնը, իդեալիստական փիլիսոփայության բազմապիսի երանգները և այլն), նա ծնում է նաև հասարակական գիտակցության այնպիսի ձևեր, իդեական այնպիսի հոսանքներ, որոնք պայքարում են իշխող վերնաշենքի դեմ, բայքայում են այն բազիսը, որ ծնել է նրանց։ Հասարակական գիտակցության այդպիսի ձևերի թվին են պատկանում արվեստի ու գրականության պրոգրեսիվ հոսանքները՝ բուրժուական հասարակակարգի պայմաններում։ Հակառակը պնդել, ինչպես այդ անում են որոշ ընկերներ, կնշանակեր հակասել ընկեր Ստալինի այն դրույթին, թե վերնաշենքը ստեղծվում է բազիսի կողմից և կոչված է ակտիվորեն օժանդակելու իր բազիսի ձևավորմանն ու ամրապնդմանը։ Այդ ընկերները փաստորեն ընդունում են, որ միևնույն վերնաշենքային ձևերը սպասարկում են երկու բազիսների, մի բան, որ աբսուրդ է։ Մի՞թե կարելի է ասել, որ Պուշկինն ու Լերմոնտովը, Գերցենն ու Բելինսկին, Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը, մեծապես Մարքսն ու Էնգելսը իրենց հայացքներով, իրենց ստեղծագործությամբ օգնել են այն բազիսի ամրապնդմանը, որի ծնունդն են նրանց հայացքներն ու ստեղծագործությունները։ Ընդհակառակը, անժխտելի է, որ նրանց իդեաները սուր ծայրով ուղղված էին հենց այդ բազիսի դեմ, բայքայում էին պաշտոնական հասարակության հիմքերը, արագացնելով նրա վախճանը։

Դասակարգային հասարակության մեջ, որտեղ անտագոնիստական բազիսի վրա զարգացնում են հասարակական գիտակցության տարբեր ձևեր, վերնաշենքի մեջ մտնում են նախ և առաջ պաշտոնական իդեոլոգիական ձևերը, բացի քաղաքական և իրավական հայացքներից նաև ռեակցիոն գրականությունը, կրոնը, փիլիսոփայական հոսանքները և այլն և նրանց համապատասխանող հիմնարկները։ Ինչ վերաբերում է պրոգրեսիվ իդեաներին ու հոսանքներին, ապա նրանք, լինելով հասարակական գիտակցության օպոզիցիոն ձևեր, գտնվում են վերնաշենքի նկատմամբ անընդհատ թշնամանքի մեջ, կենաց ու մահու պայքար մղելով նրա դեմ։ Մեր կարծիքով, սրանից ելնելով է, որ Վ. Ի. Լենինը բուրժուական հասարակակարգում դիտում էր երկու դասակարգ—երկու կուլտուրա—պաշտոնական հասարակության դասակարգային կուլտուրան, Պուրիշկևիչների և Գուչկովների կուլտուրան և օպոզիցիոն հոսանքների կուլտուրան, ռևոլյուցիոն դեմոկրատիայի կուլտուրան, Չերնիշևսկու և Պլեխանովի կուլտուրան։ Հայտնի է, որ ընկեր Ստալինը կուլտուրան դասում է վերնաշենքի մեջ։ Այս երկու կուլտուրաներից առաջինը մտնում էր պաշտոնական վերնաշենքի մեջ, որովհետև վերջինս օժանդակում էր տվյալ հասարակակարգի ամրապնդմանը, մինչդեռ Չերնիշևսկու կուլտուրան, նրա ռևոլյուցիոն իդեաները չէին կարող մտնել պաշտոնական վերնաշենքի կազմի մեջ։ Էլ չենք խոսում Մարքսի ու Էնգելսի իդեաների մասին, որոնք ո՛չ միայն չէին կարող մտնել բուրժուական վերնաշենքի մեջ, այլև հանդիսացան այդ վերնաշենքի ու նրան ծնող բազիսի գերեզմանափորը, չնայած որ իրենք հանդիսանում էին բուրժուական բազիսի ծնունդը։ Հենց այստեղ պետք է փնտրել բուրժուական բազիսի ու վերնաշենքի, ինչպես նաև հասարակական գիտակցության ձևերի միջև գոյություն ունեցող միասնության և հակասության դիալեկտիկան։

Եթե մենք ասում ենք, որ կապիտալիստական էկոնոմիկան հակասական է, որ կապիտալիստական բազիսը անտագոնիստական բնույթ ունի, ապա այստեղից բխում է, որ այդ բազիսի ծնած իդեաները նույնպես հակասական են։ Եվ եթե նրանց մի մասը նպաստում է կապիտալիստական հասարակության ամրապնդմանը և

մտնում է կապիտալիստական վերնաշենքի մեջ, ապա մնացած մասերը (առաջադիմական գրականությունը և արվեստը, ռևոլյուցիոն-դեմոկրատական իդեաները և այլն) քայքայում են տվյալ բազիսը և նրա համապատասխան վերնաշենքը։

Բոլորովին այլ պատկեր գոյություն ունի բազիսի և վերնաշենքի փոխհարաբերության տեսակետից՝ սոցիալիստական հասարակակարգում։ Այստեղ բազիսի և վերնաշենքի միջև հակասություն չկա, նրանք հանդես են գալիս իբրև մի միասնություն։ Եթե բուրժուական հասարակակարգում գոյություն ունեն հասարակական գիտակցության և իդեոլոգիայի բազմաթիվ անտագոնիստական ձևեր, ապա սոցիալիստական հասարակակարգում մարքս-լենինյան իդեոլոգիան հանդիսանում է միակ իշխող իդեոլոգիան, որի վրա հիմնված են հասարակական գիտակցության մնացած բոլոր ձևերը, ինչպես, օրինակ՝ գիտությունը, գրականությունը, արվեստը, բարոյականությունը և այլն։ Հետևաբար, եթե կապիտալիստական հասարակակարգում վերնաշենքը ավելի նեղ ու սահմանափակ է, քան հասարակական գիտակցության ձևերը, ապա սոցիալիզմի ժամանակ նրանք համընկնում են միմյանց հետ և միաձուլվում, կազմելով մի օրգանական ամբողջություն։ Այդ պատճառով էլ մեր հասարակակարգում հասարակական գիտակցության բոլոր ձևերը— գիտությունը, արվեստը, փիլիսոփայությունը, բարոյականությունը և այլն— հանդիսանում են վերնաշենքի բաղադրիչ մասերը։ Ավելին, մեզ մոտ վերնաշենքի հասկացությունը ավելի լայն է ու ընդարձակ, քան հասարակական գիտակցության ձևերի հասկացությունը։

Ընկ. Ջալոյանը արհեստականորեն լայնացնում է հասարակական գիտակցության ձևերի շրջանակները, երբ գրում է թե բազիսը ստեղծում է վերնաշենքից ավելի ընդարձակ մի ինչ-որ բան, որը դուրս է գալիս իշխող դասակարգի շահերի սահմաններից և դառնում է «հասարակության բոլոր շերտերի համար ընդհանուր հոգեկան արժեքներ»։ Այս տողերի հեղինակը պետք է հիշեր ընկեր Ստալինի այն խոսքերը, թե յուրաքանչյուր բազիս ունի իրեն համապատասխանող վերնաշենքը։ Կարիք չկա հորինելու վերնաշենքի ինչ-որ հավելյալ էլեմենտներ, ինչ-որ հոգևոր արժեքներ, որոնք իբր թե ստեղծվում են հասարակության բոլոր շերտերի համար։ Մարքսիզմի կլասիկները երբեք չեն խոսել այնպիսի հավելյալ հոգևոր արժեքների մասին, որոնք ստեղծված լինեին հասարակության բոլոր շերտերին սպասարկելու համար։ Մարքսիստներին հայտնի է, որ իշխող դասակարգերը իրենց հոգևոր «արտադրանքը» հրամցնում են իբրև համաժողովրդական, համամարդկային մի բան։ Բայց անտագոնիստական հասարակակարգում ստեղծված բոլոր իդեաներն ըստ էության ունեն դասակարգային բնույթ, նրանք իրենց վրա կրում են դասակարգային պատկանելիության կնիքը։

Ըստ էության խոսք կարող է լինել միայն այն նյութական ու հոգևոր ժառանգության մասին, որը անցնում է մի սերնդից մյուսին, մի ֆորմացիայից մյուսին։ Ընկ. Ջալոյանը շոշափում է այս հարցը, բայց նա իր առաջ բաշած խնդիրը լուծում է ոչ մինչև վերջ և ոչ ճիշտ։ Նա իրավացի է, երբ պնդում է, որ հասարակության նյութական կյանքի պայմաններում մեկ ֆորմացիայից ժառանգաբար մյուսին են անցնում արտադրողական ուժերը, որոնք նոր ֆորմացիայի հաղթանակից հետո զարգացման լայն հնարավորություն են ստանում։ Նա իրավացի է նաև այն ժամանակ, երբ գտնում է, որ նոր բարձրացող դասակարգը իր սեփական իդեոլոգիան ստեղծելու համար չի կարող չօգտվել այն իդեական մատերիալից, որը ստեղծվել է նախորդ հասարակակարգերում, մարդկության զարգացման ամբողջ ընթացքում։ Բայց նա իր հոդվածում չի բացատրում այն հարցը, թե բարձրացող դասակարգը անցյալի ստեղծածը ոչ ժառանգությունից է հրաժարվում։ Մեր կարծիքով այն ամենը, ինչ մտնում էր անցյալի վերնաշենքի մեջ և օժանդակում էր հին բազիսի ամրապնդմանը, այդ ամենը մերժվում է ու գեն նետվում. իսկ այն պրոգրեսիվ իդեաները, որոնք արտահայտում էին ժողովրդի, նրա աշխատավորական մասսաների մտքերն ու ձգտումները և այսպես թե այնպես ոչ թե ամրապնդում, այլ, ընդհակառակը, քայքայում ու խարխլում էին հին բազիսն ու հին վերնաշենքը, այդ բոլոր էլեմենտները աստիճանաբար յուրացվում են նոր վերնաշենքի կողմից։

Ընկ. Ջալոյանի հոդվածի անընդունելի կողմերից մեկն էլ այն է, որ նա պնդում է, թե գիտությունն ընդհանրապես, այսինքն՝ գիտությունը բնության մասին և գիտությունը մարդկային հասարակության մասին, երկու կողմ ունի— վերնաշենքային և ոչ վերնաշենքային, ըստ որում գիտության կուտակած էմպիրիկ նյութը նա համարում է ոչ վերնաշենքային, իսկ այդ էմպիրիկ նյութի «ամփոփումը օրինաչափությունների համընդհանուր սիստեմի մեջ՝ վերնաշենքային։ Նրա կարծիքով այդպիսի երկու կողմեր ունեն նաև գրականությունն ու արվեստը, ըստ որում վերնաշենքի մեջ չի մտնում, «կոնկրետ պատմական իրականության ճշմարտությունը», իսկ վերնաշենքային է միայն այդ իրականության թեորետիկական հասկացումը» (осмысление)։ Ավելին, ընկ. Ջալոյանը պրե-

դում է, որ հասարակական գիտակցության ձևերի թվին պատկանող գրականությունն ու արվեստը ամենևին էլ չեն մտնում վերնաշենքի մեջ։ Այստեղից ելնելով, նա հայտարարում է, որ «ճշմարիտ-գեղեցիկը» չի կարող պատկանել վերնաշենքին, չի կարող ունենալ դասակարգային կամ պարտիական բնույթ։

Խոսելով «ճշմարիտ-գեղեցիկի» մասին, ընկ. Ջալոյանն, իհարկե, նկատի ունի գրողի կամ նկարչի ստեղծագործության այն կողմը, որը ապրում է դարեր, այսինքն՝ յուրաքանչյուր գրական կամ գեղարվեստական գործի կատարյալ ձևը։ Բայց այսպիսի չափանիշով գրականության ու արվեստի գործերին կարող է մոտենալ միայն այն մարդը, որ հեռու է կանգնած հասարակական կյանքից։ Հասարակության առաջավոր անդամները կլասիկների մոտ առաջին հերթին փնտրել են նրանց գործերի սոցիալական բովանդակությունը և գտել են իրենց քաղաքացիական զգացմունքների ու սոցիալական մտքերի պատասխանը։

Երբ մենք խոսում ենք, օրինակ՝ Շեքսպիրի, Գյոթեի, Պուշկինի, Տոլստոյի, Բեթհովենի, Չայկովսկու, Ռեպինի և ուրիշների ստեղծագործության հանճարեղության ու հավերժ ապրելու մասին, ապա առաջին հերթին նկատի ունենք, որ այդ ստեղծագործությունների մեջ ճշմարտացիորեն արտացոլված է նրանց ստեղծողների էպոխան։ Յուրաքանչյուր կլասիկ արդյունք է իր էպոխայի։ Եվ ինչքան ավելի նա սոցիալապես մեծ է ու պրոգրեսիվ՝ իր հայացքներով, այնքան ավելի ուժեղ են արտահայտված նրա ստեղծագործության մեջ իր էպոխայի առաջավոր իդեաները։ Այսպիսով, մեծ գրողները, արվեստագետները և նրանց ստեղծագործությունները հավերժ ապրում են ոչ միայն այն պատճառով, որ նրանց գործերն օժտված են կատարման բարձր արվեստով, այլ այն պատճառով, որ նրանք ճշմարտացիորեն և, իհարկե, կատարյալ ձևով արտացոլել են իրենց էպոխան։ Պարզ է, որ ինչքան ավելի բարձր է տվյալ ստեղծագործության սոցիալական նշանակությունը, այնքան ավելի անմահ են այդ ստեղծագործությունն ու նրա ստեղծողը։ Ինչքան ավելի լայն է արվեստագետի կողմից սոցիալական կյանքի ընդգրկումը, այնքան ավելի խոշոր է նա։ Ինչքան շատ են տվյալ գործում պրոգրեսիվ իդեաները, այնքան ավելի անմահ է այդ գործը։ Ահա թե ինչպես պետք է հասկանալ «ճշմարիտ-գեղեցիկի» էությունը։ Դժբախտաբար ընկ. Ջալոյանը, առաջ քաշելով այս հարցը, չի կարողացել ըստ էության և ամբողջովին բացատրել այն, ցույց տալ «ճշմարիտ-գեղեցիկի» բուն էությունը։

Գրականության ու արվեստի, գիտության ու փիլիսոփայության դասակարգայնության և պարտիականության լենինյան - ստալինյան սկզբունքը հանդիսանում է մեր իդեոլոգիայի ամենակարևոր առանձնահատկություններից մեկը։ Սովետական գիտության, գրականության ու արվեստի պարտիականության սկզբունքի խեղաթյուրումների դեմ մղվող պայքարը հանդիսանում է Սովետական Հայաստանի գիտնականների ու արվեստի ֆրոնտի աշխատողների առաջնահերթ խնդիրը։ Միայն զինված լինելով բոլշևիկյան պարտիականությամբ, մենք կկարողանանք հաջող պայքար մղել բուրժուական իդեոլոգիայի, բուրժուական նեխված գիտության ու կուլտուրայի դեմ։ Գիտության, գրականության, արվեստի ու փիլիսոփայության պարտիականության լենինյան սկզբունքն օրգանապես բխում է մարքս-լենինյան փիլիսոփայական ուսմունքից, իրականության արտացոլման լենինյան թեորիայից, որը ինքնըստինքյան դասակարգային է և հետևապես պարտիական։

* * *

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին նաև ընկ. ընկ. Խ. Մոմջյանը, Ար. Կարապետյանը,[1] Գր. Վարդանյանը, Նաիրի Զարյանը, Ա. Հարությունյանը և Ռ. Կարապետյանը։

Ելույթ ունեցավ նաև ընկ. Վ. Ջալոյանը։ Նա փորձեց բերել նոր, իր կարծիքով ավելի համոզիչ ապացույցներ՝ հօգուտ իր տեսակետների, բայց այդ ելույթը, ինչպես նաև ընկ. Ջալոյանի պաշտպանած մի շարք տեսակետները հավանության չարժանացան դիսկուսիայի մասնակիցների կողմից։

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

---

1 Ընկ. Ա. Կարապետյանի հոդվածը տպագրված է մեր «Տեղեկագրի» 1951 թվի 10-րդ համարում, իսկ ընկ. Մոմջյանի հոդվածը՝ այս համարում։ Խմբ.։